

ցիական կեանքը ուսումնասիրող Տիխէւեան յանձնաժողովի աշխատանքներին, տուել է Ивсл. эконом. быта госуд. крест. въ Зангезурскомъ уѣздѣ հիմնական աշխատասիրութիւնը:

Հին-Նախիջևանի հայ գիւղերից մէկում ծնուած Զելիկսկին հնարաւորութիւն չէր ստացել բարձրագոյն կրթութիւն ստանալ, սակայն բնական ձիրքը և աշխատասիրութիւնը լրացրին նրա կրթութեան պակասները. ո՞րքան կ'օգտուէր մեր կեանքը եթէ մեր ինտելիգենցիան այնպէս լաւ ճանաչէր մեր երկիրն ու ժողովուրդը, ինչպէս հանգուցեալ գործիչը:

Նոյեմբ. 6

Լ. Ս.

—Մեր տեսակէտը հայոց թատրոնի մասին յայտնի է մեր ընթերցողներին. դեռ 1901 թուի № 10-ում մենք յայտնում էինք այն միտքը, որ առանց արհեստական միջոցների, առանց հասարակական գրամական օգնութեան չեն կարող աճել մեզանում շատ կուլտուրական պահանջներ: Հին Աթէնքում Սոլոնը, ասել էինք մենք, օրէնքով պարտաւորեցնում էր հարուստներին՝ իրանց սեփական ծախսերով հոգալ թատրոնական գրուածքները բեմի վրայ ներկայացնելու մասին: Պերիկլէսը սահմանել էր պետական գանձարանից փող տալ չքաւոր քաղաքացիներին՝ թատրոն յաճախելու համար: Եւ թատրոնը նպաստ էր ստանում ոչ միայն հին Աթէնքում, այլ և ժամանակակից Եւրոպայում—նպաստ է ստանում Պարիզի Théâtre Français-ի նման հիմնարկութիւնը: Եւ գրամատիկական ընկերութեան փորձը դարձեալ ապացուցեց այդ ճշմարտութիւնը:

1903—1904 թ. թատրոնական ներկայացումներից ստացուած է 16,965 ռ., իսկ ծախքը եղել է 24,718 ռ.—դեֆիցիտ 7753 ռ.: Վարչութիւնը այդ դեֆիցիտը աշխատել է ծածկել և ի միջի այլոց նուէրներ է հաւաքել 5435 ռուբլի: Անշուշտ կարեւոր է և պէտք է ըննադատել վարչութեան այս կամ այն թերութիւնը, բայց երբէք չպէտք է մոռանալ, որ մանաւանդ մեր առանձնայատուկ պայմաններում հասարակական բաղմամբիւ ձեռնարկութիւնները, որքան էլ օրինակելի կերպով տառեան, այնուամենայնիւ պահանջում են խնամք, արուեստական նպահպանում:

Ուրախալի է որ մեր հասարակութեան որոշ մասը սկսել է գիտակցել հասարակական օժանդակութեան կարեւորութիւնը: Դրամ. ընկ. Նոյեմբերի 7-ին կայացած նիստում պ. Ա. Մանթաշեան յայտնեց, որ նա յանձն է առնում 3 տարի շարունակ

իր կողմից նուիրել տարեկան հինգ հազար ըուբլի, որպէսզի թատրոնական գործը թիֆլիսում լաւ հիմքերի վրայ դրուած լինի: Յօժարութիւն է յայտնում իւրաքանչիւր տարի Դրամատիկական ընկերութեանը նպաստ տալ և՛ երեանցի պ. Տ. Աֆրիկեանը:

Հ. Դրամատիկական ընկերութեան ընդհանուր ժողովը միաձայն որոշեց պ. պ. Ա. Մանթաշեանին և Տ. Աֆրիկեանին ընկերութեան պատուաւոր անդամներ ընտրել:

— «Сношения Петра Великаго съ арм. нар.» նշանաւոր աշխատութեան հեղինակ և պետական յայտնի գործիչ Կարապետ Եզեանցի յարգողների մի խումբ նոյեմբերի 6-ին կատարել է նրա յիմնամեայ յորելեանը: Յարգողների հաւաքած դրամագլխի վերջնական կարգադրութիւնը թողնւում է յորելեարի բարեհայեցողութեան:

— «Մշակից» իմանում ենք, որ «մօտ ժամանակներում կ'իրագործուի մի ծրագիր, որի մասին վաղուց միջնորդում են Կովկասի հայ-կաթոլիկները: Թիֆլիսում կը բացուի հոգևոր սեմինարիա յատկապէս Ռուսաստանում բնակուող կաթոլիկ հայերի համար: Ձենք կասկածում, որ այս նոր հոգևոր դպրոցի հիմնարկութիւնը մեծ զարկ կը տայ նրանց բարոյական և կրթական զարգացման:

Դպրոցի տեսչի պաշտօնի համար թեկնածու է համարուում և հաւանականաբար կ'ընտրուի Տէր-Սարգիս վարդապետ Տէր-Արքահաման, բնիկ ալեքսանդրօպոլցի, իր իր կրթութիւնն առել է Հոռոմի և մինչև վերջին տարին վարում էր Հոռոմի հայոց վարժարանի (Collegio Armeno) վերատեսչի օգնականի պաշտօնը, իսկ այժմ գտնւում է արդէն Ռուսաստանում: Հայ-կաթոլիկների դպրոցի հաստատութիւնը որոշուած էր արդէն 1893-ի կայսերական հրամանագրի մէջ, բայց զանազան հանգամանքների պատճառով յետաձգուեց: Հայ-կաթոլիկների հոգևոր վարչութեան վերաբերեալ, անցեալ տարուայ նոր պետական կարգադրութեան համաձայն, որի մասին արդէն իր ժամանակին խօսել ենք «Մշակում», դպրոցի հարցը վերջնականապէս վճռուած է դրական կերպով:

Գալով Թիֆլիսում հիմնուելի հայ-կաթոլիկ կոնսիստորիային, այս խնդիրը փոքրինչ ուշացաւ, որովհետև կոնսիստորիայի նախագահի կամ հայ-կաթոլիկ առաջնորդի անձնաւորութեան մասին դեռևս համաձայնութիւն չէ կայացել ոռուսաց կառավարութեան և Հոռոմի Աթոռի մէջ: Յոյս կայ, որ վերոյիշեալ Տէր-Արքահամանի ընտրութեամբ այս տարաձայնութիւնն էլ կը վերջանայ և շուտով կ'ունենանք

Թիֆլիսում հայ-կաթոլիկների հոգևոր վարչութեան վերաբերեալ բոլոր ծրագրուած հիմնարկութիւնները»:

—Հոկտեմբերի 14-ից մինչև 18-ը Թիֆլիսի դատաստանական պալատի I բաժնում Ֆ. Ֆ. Դեպպի նախագահութեամբ քննուում էր Գանձակի 40 հայ բնակիչներ յայտնի գործը: Դրանք մեղադրուում էին 1903 թւի օգոստոսի 29-ին Գանձակում սոսիկանութեանը դիմադրութիւն ցոյց տալու, փողոցներում խառնակութիւն և ազմուկ հանելու մէջ, բացի դրանից՝ նրանք մեղադրուում էին նաև եկեղեցական կալուածները գանձարանի վարչութեան տակն առնելու համար կազմած յանձնաժողովին դիմադրելու և նրանց զբաղմունքն արգելելու փորձի մէջ: Այս տարուայ գարնանը Գանձակի նահանգական դատարանը քննել էր այդ գործը և մեղադրուածներին 18-ին արգարացրել, իսկ միւսներին, որ մեղաւոր ճանաչուեցին, դատապարտել էր հետեւեալ ձևով. 5 հոգու 6-ական ամիս բանտարկութեան, 7 հոգու 4-ական ամիս, 2 հոգու երկուական ամիս, 3 հոգու մէկ-մէկ ամիս և 5 հոգու էլ 15 օր միայն:—Գործը պալատ ընկաւ պրոկուրորի բողոքով: Այդտեղ մեղադրուածներին պաշտպանում էին երդուեալ հաւատարմատարներ Մ. Օ. Գրուզինբերգը, Լ. Անդրոնիկովը (Բագուից), Տ. Յովհաննիսեանը, Սոմենտովսկին, երգուեալ հաւատարմատարի օգնական Սատրիսեանը և մասնաւոր հաւատարմատար Սաչատրիանը: Պալատը, 12 ժամ խորհրդակցութիւնից յետոյ, հոկտեմբերի 19-ին դռնբաց յայտարարեց հետեւեալ վճիռը. նահանգական դատարանի արգարացրածներից 9-ը հոգու ինքն էլ արգարացրեց, իսկ միւսների մասին եղած վճիռները փոխեց այսպէս. 19 հոգու անձնական կայլ իրաւունքներից զրկել և կալանաւորական ուղղիչ բաժինը դնել՝ 9 հոգու 10-ական և 10 հոգու 8-ական ամսով. 6 հոգու 6 ական ամիս, 1 հոգու 4 ամիս, 3 հոգու 2 ամիս 20 օր ամեն մէկին, 2 հոգու էլ 1½-ական ամիս բանտարկութիւն: Բարձրագոյն մանիֆեստի հիման վրայ բանտարկութեան ենթարկուած 12 անձերն ազատուում են իրանց պատժից:

—Յայտնի հարուստ Զուբալով եղբայրները 100,000 են նուիրել իրանց եղբօր յիշատակին Թիֆլիսում երեխաների համար մի յատուկ հիւանդանոց բանալու: Այդ նոյն Զուբալովները նուիրել են վրայ գրագիտութիւն տարածող ընկերութեան 10,000 ռուբլի:

—Վրաց լրագրներում հարց է բարձրացուած հոչակաւոր բանաստեղծ իշխ. Ակ. Մերեթելի անունով ֆոնդ հիմնել, և պրզէն նուիրատուութիւններ են հաւաքուում:

—Ռուսաց գրական ֆոնդը ստացել է մի խոշոր ժառանգութիւն. Ն. Ա. Ֆիրսովի կտակով այդ գրական ֆոնդը, պէտք է ստանայ 130 հազար ռուբլի:

—Պետերբուրգում վախճանուել է «Нива» շաբաթաթերթի հրատարակիչ Ա. Ֆ. Մարկար՝ թողնելով աւելի քան 6 միլլիոն ռուբլի կարողութիւն: Ահա թէ որքան ձեռնտու է լաւ հիմքերի վրայ դրուած հրատարակչական գործունէութիւնը Ռուսաստանում:

—Թիֆլիսի երաժշտական ուսումնարանի դահլիճի քսումը տեղի ունեցաւ հոկտեմբերի 24-ին, ներկայութեամբ Մեծ Իշխան Կոնստանտին Կոնստանտինովիչի, որը փոխ-նախագահ է Կայսերական Երաժշտական այն Ընկերութեան, որի հովանաւորութեան տակ գտնւում է Թիֆլիսի երաժշտական ուսումնարանը: Այդ գեղարուեստական հիմնարկութիւնը ամբողջապէս հասարակական նախաձեռնութեան է պատկանում և, ի պատիւ հայ խոշոր բուրժուազիայի, պէտք է ասել որ այդ ուսումնարանի 123 հազար ծախքի մեծ մասը այդ դասակարգի նուիրատուութիւններից է հաւաքուել: Ցանկանք որ այդ հիմնարկութիւնը զարկ տայ Կովկասի ազգութիւնների երաժշտութեան ուսումնասիրութեան և զարգացման:

—Կովկասի կառավարչապետի օգնական է նշանակուած գեներալ-լեյտնանտ Եա Դ. Մալամա:

—Մոսկուայից հաղորդում են, որ հետեւեալ ուսումնական տարին, Մոսկուայի համալսարանի պատմական-լեզուաբանական ֆակուլտետում պէտք է բացուի հայերէն լեզուի և հայկական քանահիշատութեան պատմութեան ամբիօն: Այդ պաշտօնը ստանձնելու համար հրաւիրուելու է պրոֆեսոր Գրիգոր Սալաթեանցը, որ հրաժարուել է Լազարեան ձեռնարանի տեսչի պաշտօնից: